Հարցաթերթ 1

Հարց 1. Ներկայումս քանի՞ մարդ չունի էլեկտրականություն աշխարհի մասշտաբով (ընտրել 1 տարբերակ):

1. 2-ից մեկը
2. **5-ից մեկը**
3. 10-ից մեկը

Հարց 2. 2018 թվականին նշված երկներից որը՞ ունի կանանց ամենամեծ մասնակցությունը պառլամենտում (ընտրել 1 տարբերակ):

1. **Ռուանդա**
2. Շվեդիա
3. Շվեյցարիա
4. Ռուսաստան

Հարց 3. Ո՞ր երեք երկրներն են ամենաշատը վատ ազդեցություն թողնում կլիմայական փոփոխությունների վրա (ընտրել 3 տարբերակ):

1. Հայաստան
2. **ԱՄՆ**
3. **Հնդկաստան**
4. Սաուդյան Արաբիա
5. Եգիպտոս
6. **Չինաստան**

Հարց 4. Ինչպե՞ս է Համաշխարհային բանկը սահմանում ծայրահեղ աղքատությունը (ընտրել 1 տարբերակ):

1. Սոցիալական ցուցանիշների հիման վրա. աղքատ են համարվում այն անձինք, ովքեր մարդկային զարգացման հնարավորություններից զուրկ են:
2. Համաշխարհային բանկը սահմանում է ծայրահեղ աղքատությունը՝ որպես իրավիճակ, երբ մարդիկ չունեն մաքուր ջուր և սնունդ:
3. **Դրամական եկամուտների հիման վրա. ծայրահեղ աղքատ համարվում են օրական 1,9 ԱՄՆ դոլարից պակաս տնօրինվող եկամուտ ունեցող մարդիկ:**
4. Ծայրահեղ աղքատ համարվում են տարրական կրթություն չունեցող մարդիկ:

Հարց 5. Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) առաջադրանքն է (ընտրել 1 տարբերակ).

1. պահպանել միջազգային խաղաղություն ու անվտանգություն
2. ազգերի միջև զարգացնել բարեկամական հարաբերություններ
3. ազգերի միջև գործողությունների ներդաշնակման կենտրոնում լինել
4. **վերը նշված բոլորը**

Հարցաթերթ 2

Հարց 1. Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) առնչությամբ ո՞րն է ճիշտ ստորև նշվածներից (ընտրել 2 տարբերակ).

1. **Գլոբալ նպատակները համապարփակ գործիքակազմ են, որոնք նպատակ ունեն կրճատել աղքատությունը, պաշտպանել մոլորակը և ապահովել, որ բոլոր մարդիկ ապրեն խաղաղ և բարգավաճեն**
2. Կայուն զարգացման նպատակների շրջանակը մշակվել է միայն զարգացող երկրների համար
3. **Կայուն զարգացման 2030 օրակարգը ընդունվել է ՄԱԿ-ի բոլոր անդամ երկրների կողմից 2015 թվականին**
4. Կայուն զարգացման նպատակներից բոլորը պետք է տեղայնացվեն երկրում

Հարց 2. Կայուն զարգացման երեք հենասյուներն են (ընտրել 1 տարբերակ).
1. Սեր, խաղաղություն և ուրախություն
2. Արժեթղթերի շուկա, բանկային համակարգ և ձեռնարկություններ
3. **Հասարակություն, տնտեսություն և շրջակա միջավայր**

Հարց 3. Նշվածներից ո՞րը Կայուն զարգացման նպատակ չէ (ընտրել 1 տարբերակ).
1. Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ
2. **Շահույթի մաքսիմալացում և էժան աշխատուժ**
3. Արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածքներ

Հարց 4. Ո՞ր Կայուն զարգացման նպատակը կհանդիսանա ամենամեծ գլոբալ մարտահրավերը (ընտրել 1 տարբերակ):
1. Մատչելի և մաքուր էներգիա (Գլոբալ էներգետիկ համակարգի փոփոխությունը)
2. **Աղքատության վերացում**
3. Որակյալ կրթություն (Կրթություն բոլորի համար)

Հարց 5. Ի՞նչ կարող ենք մենք անել ավելի պատասխանատու սպառման համար (ԿԶՆ 12) (ընտրել 2 տարբերակ):
1. Թափել մեզ համար անպետք բոլոր իրերը
2. **Կարգավորել և սարքել բոլոր սարքավորումները, որոնք չեն աշխատում**
3. **Փոխանցել մեր կողմից այլևս չօգտագործվող հագուստը և սարքավորումները այն մարդկանց, ովքեր դրանց կարիքը ունեն**
4. Պատրաստել շատ և բազմազան ուտելիք, որը ընտանիքը չի հասցնում սպառել

Հարց 6. Նշվածներից որո՞նք են նպաստում ԿԶՆ 13-ին. Գործողություն հանուն կլիմայի (ընտրել 3 տարբերակ):
1. **CO2-ի դիմաց գանձվող հարկերը և այլ վճարները ուղղել կլիմայի պահպանման նախագծերին**
2. **Արևային էներգիայի համակարգերի ներդրումը քաղաքացիների կողմից**
3. Շինարարության ծավալների մեծացումը
4. **Էլեկտրոմոբիլների նկատմամբ ավելի մեղմ հարկային ռեժիմի սահմանումը**

Հարցաթերթ 3

Հարց 1. ԿԶՆ որ թիրախի/թիրախների հետ կարելի է կապել X համայնքի «Խթանել համայնքում գաստրո տուրիզմ» ծրագիրը (ընտրել 1 տարբերակ):
1. Պաշտպանել աշխատանքային իրավունքները և խթանել անվտանգ և ապահով աշխատանքային միջավայր բոլորի համար
2. Ձեռք բերել համարժեք և հավասար սանիտարահիգիենիկ պայմաններ բոլորի համար

3. Ուժեղացնել թմրամիջոցների չարաշահման կանխարգելումը և բուժումը, այդ թվում՝ թմրադեղերի չարաշահումը և ոգելից խմիչքների վնասաբեր օգտագործումը
4. **<u>Մշակել և իրականացնել ռազմավարություն՝ խթանելու կայուն զբոսաշրջությունը, որն ստեղծում է աշխատատեղեր և խթանում տեղական մշակույթն ու արտադրատեսակները</u>**
5. Բոլոր պատասխանները ճիշտ են

Հարց 2. Նշվածներից որոնք կարող են հանդիսանալ համայնքային ծրագրի ազդեցության չափորոշիչներ (ընտրել 2 տարբերակ):

1. **<u>Համայնքում երեք և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների թվաքանակի աճ 10 տոկոսով</u>**
2. **<u>Անմշակ գյուղատնտեսական նշանակության հողատարածքները կրճատում տարեկան 5 տոկոսով</u>**
3. Ոռոգման ջրագծերի մաքրում, 2000 գմ
4. Վերապատրաստմա դասընթացների մասնակիցների թվաքանակ, 100 համայնքային ծառայող
5. Բոլոր պատախանները ճիշտ են

Հարց 3. Նշվածներից որոնք են հանդիսանում համայնքային ծրագրի միջոցառումների արդյունքների չափման ծավալային/քանակական չափորոշիչներ (ընտրել 1 տարբերակ):

1. Տնային խնամք ստացած տարեցների քանակ
2. Վերապատրաստման դասընթացների թիվ
3. Ստորագրված համագործակցության հուշագրեր կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների հետ
4. Աուդիտի ենթարկված ՀՈԱԿ-ների թիվ
5. **<u>Բոլոր պատասխանները ճիշտ են</u>**

Հարց 4. Նշվածներից որո՞նք են հանդիսանում համայնքային ծրագրի ազդեցության չափորոշիչներ (ընտրել 1 տարբերակ):

1. Մահացու ելքով ՃՏՊ-ների կրճատում 5%-ով
2. Համայնքում գործազուրկների թվաքանակի նվազեցում 3%-ով
3. Համայնքում ծայրահեղ աղքատության վերացում
4. Մանկամահացության կրճատում 10%-ով
5. **<u>Բոլոր պատասխանները ճիշտ են</u>**

Հարց 5. ԿԶՆ որ թիրախի/թիրախների հետ կարելի է կապել Y համայնքում «Երեխաներին դպրոցական սնունդով ապահովման» ծրագիրը (ընտրել 2 տարբերակ):

1. Իրականացնել Սպառման և արտադրության կաղապարների կայուն ծրագրերի տասնամյա շրջանակը
2. Մինչև 2030թ. կիսով չափ կրճատել մեկ շնչին ընկնող պարենի գլոբալ վատնումը մանրածախ և սպառողների մակարդակներում
3. **<u>Մինչև 2030թ. վերջ դնել սովին և ապահովել բոլոր մարդկանց, մասնավորապես աղքատների և խոցելի իրավիճակներում գտնվող անձանց համար անվտանգ, սննդարար և բավարար սննդի մատչելիությունը ողջ տարվա ընթացքում</u>**

4. **<u>Մինչև 2030թ. մեկ երրորդով կրճատել վաղաժամ մահացությունը ոչ վարակիչ հիվանդություններից՝ կանխարգելման և բուժման միջոցով, և խթանել հոգեկան առողջությունը և բարեկեցությունը</u>**
5. Բոլոր պատասխանները ճիշտ են

Հարց 6. Նշվածներից որը կարելի է համարել «Տնային պայմաններում տարեցների խնամք» համայնքային ծրագրի ազդեցության չափորոշիչ (ընտրել 1 տարբերակ):

1. Համայնքի տարեցներին ծառայություններ մատուցող սոցիալական աշխատողների քանակ
2. Համայնքում տնային խնամք ստացած տարեցների քանակ
3. Տնային խնամք ստացող տարեցների միջին տարիք
4. **<u>Համայնքի միայնակ տարեցների կշիռը, որոնք ստանում են տնային պայմաններում խնամքի ծառայություններ</u>**
5. Բոլոր պատասխանները ճիշտ են

Հարց 7. Նշվածներից որը կարող է հանդիսանալ «Հանրակրթական դպրոցների շենքերի կառուցում» ծրագրի նպատակ (ընտրել 1 տարբերակ):

1. Որակյալ կրթական ծառայությունների ամբողջական և բազմազան փաթեթի հասանելիություն յուրաքանչյուր համայնքում և բնակավայրում
2. Կրթական միջավայրի ամբողջական փոխակերպում՝ դարձնելով այն կրթվելու և ստեղծագործելու համար ապահով և անվտանգ միջավայր
3. Համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում
4. Բոլոր բնակավայրերում և յուրաքանչյուր ընտանիքի հասանելի դարձնել մատչելի դպրոցական ծառայությունները
5. **<u>Բոլոր պատասխանները ճիշտ են</u>**

Հարց 8. ԿԶՆ որ թիրախի/թիրախների չափորոշիչ կարող է հանդիսանալ «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների քանակ» չափորոշիչը (ընտրել 2 տարբերակ)

1. **<u>Զգալիորեն կրճատել աղետների, այդ թվում՝ ջրին առնչվող աղետների հետևանքով մահերի և տուժածների թիվը (11.5)</u>**
2. **<u>Բոլորի համար հասանելի դարձնել պատշաճ, անվտանգ և մատչելի բնակարաններ և հիմնական ծառայություններ, արդիականացնել հետնախորշերը (11.1)</u>**
3. Մշակել որակյալ, հուսալի, կայուն և դիմակայուն ենթակառուցվածքներ՝ օժանդակելու տնտեսական զարգացմանը և մարդկանց բարեկեցությանը (9/1)
4. Պաշտպանել հիմնարար ազատությունները՝ համաձայն ազգային օրենսդրության և միջազգային համաձայնագրերի (16/10)
5. Բոլոր պատասխանները ճիշտ են:

Հարց 9. ԿԶՆ որ թիրախի/թիրախների հետ կարելի է կապել Z համայնքում «Խմելու ջրի ջրագծերի վերանորոգում» ծրագիրը (ընտրել 2 տարբերակ):

1. **<u>Ձեռք բերել անվտանգ և մատչելի խմելու ջրի համընդհանուր և հավասար հասանելիություն բոլորի համար</u>**
2. **<u>Էականորեն մեծացնել ջրօգտագործման արդյունավետությունը բոլոր ոլորտներում և ապահովել քաղցրահամ ջրի կայուն ջրառը և ջրամատակարարումը</u>**

3. Մինչև 2020թ. ապահովել ցամաքային էկոհամակարգերի և ցամաքում քաղցրահամ ջրի էկոհամակարգերի և դրանց ծառայությունների պահպանումը, վերականգնումը և կայուն օգտագործումը
4. Բարելավել ջրի որակը՝ կրճատելով աղտոտումը, վերացնելով վտանգավոր քիմիկատներ և նյութեր թափելը և նվազեցնելով դրանց արտահոսքերը, կիսով չափ կրճատելով չմաքրվող կեղտաջրերի համամասնությունը և էականորեն մեծացնելով վերամշակումը և անվտանգ վերօգտագործումը
5. Բոլոր պատասխանները ճիշտ են

Հարց 10. Նշվածներից որը կարելի է համարել «Ընտանեկան նպաստներ անապահով տնային տնտեսություններին» համայնքային ծրագրի ազդեցության չափորոշիչ (ընտրել 1 տարբերակ):

1. Համայնքում անապահով ՏՏ-ների քանակ
2. Ընտանեկան նպաստ ստացող ՏՏ-ների քանակ
3. **Համայնքի անապահով ՏՏ-ների թվաքանակի կրճատում**
4. Ընտանեկան նպաստի միջին մեծություն
5. Բոլոր պատասխանները սխալ են

Հարց 11. Նշվածներից որը կարող է հանդիսանալ «Ինտենսիվ պտղատու այգիների հիմման համար տնտեսավարողներին տրամադրվող աջակցություն» ծրագրի նպատակ (ընտրել 2 տարբերակ):

1. Ինտենսիվ պտղատու այգիների հիմման համար տնտեսավարողներին, աջակցության տրամադրում համապատասխան նախատեսված բովանդակության և ծավալների
2. Պտղի արտադրության ծավալների ավելացում
3. Ծահառուների գոհունակության բարձրացում այգեհիմման աջակցության արդյունքներից
4. **Այգետնկումների խթանմամբ համայնքում պտղաբուծության զարգացում**
5. **Հին և ցածր բերքատու այգիներին փոխարինում բարձր բերքատու այգիներով**